

18 MAY 2010

ՀՅՍԹ Պետ. Մանկ. Խնադապուտիք Հեռակա բաժին

ԼԵԶՎԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1 կուրս, 1940—41 ուսումն. տարի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻՆՔ

Գրաբարի ինքնուրույն աշխատանքների համար


Գրաբարի ուսումնասիրությունն առաջին հայացքից կապված է լեզվական որոշ դժվարությունների հետ, սակայն այդ դժվարությունները շատ հեշտությամբ կարելի է հաղթահարել, եթե հեռակայողների գողմից հանդիս բերվի մաքսիմում էներգիա և սեր դեպի գիտական դիսցիլինի ուսումնասիրությունն ընդհանրապես և գիտակցական վերաբերմունք դեպի գրաբարի ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ մասնավորապես:

Մեր այս մեթոդական ցուցմունքը թեկուղ չի փոխարինի կենդանի գասախոսին, սակայն նրա ինքնուրույն ուշագիր ու ճշգրիտ կիրառումը կհարթի գրաբարի ինքնուրույն ուսումնասիրության ուղին և գլուխացնի ծրագրով պահանջվող նյութի արտադրությունը:

Գրաբարի ուսումնասիրությունը պետք է սկսել դրաբարի հնչյունների արտաքիրումից, տառերի համապատասխան հընչյունները լսել յուրացնելուց:

Հարկավոր է ուշագիր կարգալ և ճիշտ արտաքիրել գրաբար տեքստաները: Պետք է կարգալ բարձրաձայն, կարգալուց հետո նույնությամբ արտաքիրել տետրակում: Բոլոր տառերը գրվուն են այնպես, ինչպես աշխատաբարի տառերը:

Անհրաժեշտ է ոչ միայն կարգալ և ծանոթանալ, այլև հիմնովին յուրացնել բովանդակությունը:



09 APR 2013

Եալի պետք է կարդաք զբարար ամբողջ հոգվածը սկզբից մինչև վերջ, զանգազ, ուշագիր, ճիշտ. տիրապետեք զբարարի ընթերցանության տեխնիկային և ապա անցնեք թարգմանության. պետք է թարգմանել ոչ թե առանձին-առանձին բառերով, այլ նախադասություններով, այսպես՝ ձմեռն էանց—ձմեռն անցավ. անձրեվք անցին—անձրեվներն անցան, և գնացեալ մեկնեցան—և գնալով հեռացան: Այս եղանակով շարունակում եք մինչև հոգվածի վերջը: Թարգմանության ժամանակ պետք է ուշադրություն դարձնեք շարահյուսության վրա, նախադասության անգամների դասավորության վրա, որը տարբերվում է աշխարհաբարից. օրինակ՝ ժամանակ հատանելոյ ենաս. այս նախադասությունը թարգմանելիս պետք է սկսեք նախադասության մերջից և գաք գիտի առաջին բառը, այսպես՝ հասավ է սեղու ժամանակը, կամ ձայն տատրամի լսելի եղե յերկրի մերում. սկսենք վերջին բառից՝ մեր երկրում լսվեց տատրակի ձայնը: Ուշադրություն դարձրեք այն հանգամանքի վրա, որ գրաբարում հատկացուցիչը մեծ մասամբ դրվում է հետադա, մինչդեռ աշխարհաբարում բոլորովին հակառակն է: Օրինակ՝ գրաբարում—այդիք մեր, իսկ աշխարհաբարում՝ մեր այգիները. գրաբարում—այն տատրակի, աշխարհաբարում—տատրակի անցը և այլն: Թարգմանության ժամանակ անհրաժեշտ է հիշել այս կարևոր հանգամանքը:

Թարգմանելիս պետք է օգտագործել բառարան. դիտել արտահայտությունների գրաբարյան ձևերը և նրանց համապատասխան աշխարհաբարը. կարդալ, սովորել այդ բառերն ու արտահայտությունները: Զանցներ առաջ, մինչև բոլորովին չյուրացնեք նախորդը, եթե որևէ գժվարությունների հանդիպելու լինեք, անմիջապես դիմեցեք Հեռակա բաժնին, համոզված լինելով, որ դուք անմիջապես պատասխան կստանաք:

Սյունեատե ծանոթանում եք գրաբարի եղակի ու հոգնակի թվերին: Թվերի կազմությանը ծանոթանալուց և այն յուրացնելուց հետո, վարդություններ եք կատարում՝ աշխարհաբարքառերի եղակին դարձնելով զբարարի հոգնակի:

Բայերի մշակումն սկսում եք օժանդակ բայի խոնարհումից, որին պետք է շատ լավ սիրապետել, որովհետեւ օժանդակ բայի վերջապորությունները կրկնվում են խոնարհման մյուս

ձևերի մեջ. չորս լծորդության բայերի խոնարհումը մշակելու ժամանակ նպատակահարմար է նախ յուրացնել և լծորդի խոնարհման 3 գլխավոր ժամանակները (ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ), ապա անցնելի, առ և առ խոնարհման, այլապես դժվար կլինի չորսի խոնարհումը յուրացնել միաժամանակ: Անհրաժեշտ է կատարել շատ վարժություններ յուրաքանչյուր լծորդության հիմնովին տիրապետելու համար:

Գոյական անունների հոլովման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գլխավոր հոլովերի՝ սեռական, զործիական հոլովների վրա, ուսումնասիրել հոլովների կազմության օրինաշափությունը, գլխավոր ուշադրությունը սեռեւ սեռականի վրա, որից կազմվում են գրեթե մնացած հոլովները, թե եղակիում և թե հոգնակիում:

Ոչ մի տարակույս չկա, որ կանոնները պետք է լավ յուրացներ որպեսզի հնարավոր լինի հոգվածի հասկանալը. առանց քերականական օրենքների յուրացման, անհնարին է ընդհանրապես օտար լեզվի յուրացումը, և այն էլ առանց կենդանի զեկավարության: Նույն կարգով ու եղանակով շարունակում եք ուսումնասիրել ծրագրով նախատեսված ամբողջ մատերիալը: Որպեսզի աշխատանքը արվի պլանաշափ ձևով, զրա համար անհրաժեշտ է ծրագրում նշան ամբողջ ուսումնասիրելիք նյութը դասավորել ըստ ժամերի և օրերի և, խստիվ հետևելով ձեր սահմանած պլանին, կատարել այն անթերի: Ծրագրված, պլանային աշխատանքն անթերի ու բարեխղճորեն կատարելով, անպայման կհասնեք դրական ու արդյունավետ հետևանքի:

Երր այսպիս պլանաշափ աշխատելով սպառում եք ուսումնասիրելիք ամբողջ նյութը (համաձայն ձեզ ուղարկված ծրագրի) և բավարար չափով տիրապետում նրա յուրացմանը, այնուհետեւ ձեռնարկում եք ձեզ ուղարկված կոնտրոլ աշխատանքի թեմայի մշակմանը:

Դրաբարի ուսումնասիրության համար որպես ձեռնարկ մեր կողմից առաջադրված է Ա. Առաքելյանի «Դրաբարի խնդիրներ» որը ներկայումս սպառված է և ձեզ մնում է ձեռք բերել Հեռակա բաժնի լեզվագրական և պատմական ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողներից: Ձեզ ուղարկված թե ծրագրը և թե կոնտրոլ աշխատանքի թեման ամբողջովին

10.145

կադմված է այդ ձեռնարկի հետևողթյամբ։ Այդ հանգամանքը իրկնակի չափով անհրաժեշտ է դարձնում ձեռքի տակ այդ ձեռնարկի ունենալը։

Այս տարվանից հատուկ ուշագրություն է դարձվելու մեր կողմից հեռակայովների կոնտրոլ աշխատանքների վրա, թե որպահ բարեխզնդորեն են կատարված այդ աշխատանքները և ուղարկված նշանակված ժամկետին։ այդ հանգամանքը հաշվեկանվի ամառային սեսիաներին տվյալ առարկայի ստուդիան ժամանակ։

Զներկայացնողները քննություն չեն թույլատրվի։

ԼԵԶՅԱՆԻ ԳԵՐԱՆԱՏ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0248608

491.99(07)
36-64

գ.թ 2365, Մանկ. ինստ. տպ., պատվեր № 444, տիբաժ 750, 1940 թ.